


ՀԱՆՁԱՎՈՐ ԿՏՈՒՐՆԵՐԻ
ՊՐՈՑԵԿՏՈՒՄԸ



ԹԵՏՐԱՏ
1 9 3 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀԱՆՑՈՒՅՆ

ԼԱՆՉԱՎՈՐ ԿՏՈՒՄՆԵՐԻ ՊՐՈՑԵԿՏՈՒՄԸ

ԶԵՂԱՋԱՐԻ ՀԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐԻ
ՑԵՎ
ԱՌԱՋԱՋԱՆՐԻ ՀԱՄԱՐ

4 $\frac{\pi}{24384}$



ԹԵՍԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԲԱՑՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1935

Պատ. խմբագիր՝ Ա. Ե Ա. Խոմիցյան
Տեխ. խմբագիր՝ Կ. Զ Ե Ե Յ Ա Բ
Լ. Խ. խմբագիր՝ Ա. Ե Օ. Ա. Ա Ս Ա Մ Ժ Ա Բ
Մշտակագիր՝ Մ. Ա Լ Ի Ֆ Ա Մ Ա Յ Ա Բ

Հրատարակ՝ 3322

Գլուխ 199

Պատվեր 567

Տիրած 1000

Հանձնված՝ արտադրության 22 ապրիլի 1935 թ.

Ստորագրված ե ապրիլ 26 հունիսի 1935 թ.

Գետիքատի ապահան, Անդրկան, 11 Դնունի 4.

Ա. Բ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Հերքին տարիների ընթացքում տեխնիկական պրականությունը (սուսերեն) բավականաշատ հարստացավ և շնորհերի մասերը՝ ինքնարքությունը տարրեր հեղինակների ձեռնարկներով, սակայն չինարարական արվեստի բարդ հարցերից մեջը, այսինքն՝ լունջավոր կտուրների տրտաքին մակերեսների պրոյեկտման հարցը այդ ձեռնարկներից զնաց մեկում անհրաժեշտ չափով քննության շին առնվիր:

Այդ թնդանությունն զգում են զնաց միայն չինարարական տեխնիկությունը ու բարձրագույն տեխնիկական ուսումնական հիմնարկների ուսանողները այլ և պրոյեկտային հիմնարկներում ու արտադրություն մեջ աշխատողները:

Բնկ. Հ. Ալուանյանի կազմած «Լոնջավոր կտուրների պրոյեկտմը» համառոտ ձեռնարկը մի վերին աստիճանի ուսումնակարգություն և շնորհերի մասերը՝ ինքնարքությունը ունեցող հրատարակությունների համար, Շնորհերի վրածածկման հնարավոր յիշանակների ճշխությունը բավարար չափով հնարավորություն և տալիս առաջարկված նյութից պրականականապես ոպտիմիզացիան:

Գետք և ցանկանալ, վոր այս հրատարակությունը լայն չափով տարածվի չինարարական գործում աշխատողների և չինարական ԲՏՌԻՀ-ների ուսանողների մեջ:

Պրեմ. Հ. ԶԱՐՅԱՆ

Ց Ե Ր Կ Ո Ւ Խ Ա Ռ Ո Ւ Ք

կառւրների պրոյեկտումը արժանի յև լուրջ և բաղմակողմանի ուսումնասիրության, վորոնետե կտուրը չենքի և յական մասերից մեկն եւ վհշ միայն կառուցվածքային այլ և դեղարժեատական տեսակետից:

Հաճախ նկատել ենք, վոր մեր յերիտասարդ կաղըերը բարդ կտուրներ պրոյեկտելիս, գժվարությունների յեն հանգիպում, այդ պատճառով ել ժամանակակից նախազծերում պրոյետված են լինում կամ տափակ կտուրներ, — մինչև անդամ այնպիսի վայրերի համար, վորտեղ, ըստ կլիմայական պայմանների, այդպիսիներն անըդունելի յեն, — կամ սխալ ձեռք նախազած կտուրներ:

Ներկա ձեռնարկն իր մեջ ամփոփում և կտուրների պրոյեկտաման այն մասը, վորին՝ յեղած ձեռնարկներում, մի քանի խոսք և հատկացված միայն և վորի վրա դասախոսները յերկար կանգ չեն առնում, ժամանակի սղության պատճառով:

Սպեկներն ու ծածքերը և նրանց կառուցվածքն ու հաշվումը, — վորոնց համապատասխան դասընթացների առարկաներն են, և վորոնց հատկացված և բավականաշտի ուշադրություն, — այս ձեռնարկի մեջ չեն մտնում:


Ընթերցողներին մենք խորհուրդ ենք տալիս ձեռնարկում բերված խնդիրները լուծելիս չբավականանալ միայն նկարները դիտելով, այլ ինքնուրույն կերպով գծել խնդիրներին վերաբեր զող նկարները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շենքի վերին մասը, վոր պաշտպանում է շենքը
մթնոլորտալին տեղումներից և բաղկացած է ծպեղներից
ու ծածքից կոչվում է կտուր:

Հորիզոնական կամ շատ չնշին թեք մակերես ունե-
ցող տանիքները կոչվում են տափակ կտուրներ, իսկ այն
ձեր կտուրները, վորոնց մակերեսը կազմված է դեպի
հորիզոնը թեքված հարթություններից, կոչվում են լան-
ջավոր կտուրներ:

Թեքված հարթությունները, վոր կազմում են կտուրը




Նկ. 1

(Նկ. 1), կոչվում են լանջերը, փոխհատ-
վելով, կազմում են գուրս ընկած և ներս ընկած լերկ-
նիստ անկյուններ, վորոնցից առաջինները կոչվում են
կողեր, իսկ վերջինները՝ նոսարաններ. Վերին հորիզոնա-
կան կողերը կոչվում են պիպեր:

Պիպի և կտուրի հիմքի հորիզոնական հարթության

միջև գտնվող հեռավորությունը կոչվում է կտուրի վերելքի բարձրագույնը կամ կտուրի վերելք:

կտուրի վերելքը (նկ. 2) վորոշվում է պիսկի բարձ-



Նկ. 2

բության (հ) և կտուրի լայնության (լ) հարաբերությունից՝ $\left(\frac{h}{l}\right)$, ընդունելով վերջինս լեռկանջ կտուրի վերաբերյալ:

Կտուրի թեքվածքը վորոշվում է կտուրի վերելքով կտուրատիճաններով:

Յերկանջ կտուրների վերելքը հավասար է. —

1. մետաղաթերթ ծածքի համար $\frac{1}{8}$ 1 մինչև $\frac{1}{5}$ 1

2. կղմինտրի և թիթեղնաքարի համար $\frac{1}{4}$ 1 մինչև $\frac{1}{2}$ 1,

3. տոլի ծածքի համար՝ $\frac{1}{10}$ 1 մինչև $\frac{1}{5}$ 1 և

4. փալտացեմենտի ծածքի համար՝ $\frac{1}{20}$ 1 մինչև $\frac{1}{10}$ 1.

Յերկանջ կտուրների թեքվածը հավասար է. —

1. մետաղաթերթ ծածքի համար

$1 = \frac{1}{4} \left(\frac{1}{2}\right)$ մինչև $\frac{2}{5} \left(\frac{1}{2}\right)$ կամ 14^0 -ից մինչև 22^0 ,

2. կղմինտրի և թիթեղնաքարի ծածքի համար

$$1 = \frac{1}{2} \left(\frac{1}{2} \right) \text{մինչև } 1 \left(\frac{1}{2} \right) \text{կամ } 27^{\circ}\text{-ից } \text{մինչև } 45^{\circ},$$


3. տոլլի ծածքի համար

$$1 = \frac{1}{5} \left(\frac{1}{2} \right) \text{մինչև } \frac{2}{5} \left(\frac{1}{2} \right) \text{կամ } 11^{\circ}\text{-ից } \text{մինչև } 22^{\circ} \text{ և}$$

4. փայտացեմենտի ծածքի համար

$$1 = \frac{1}{10} \left(\frac{1}{2} \right) \text{մինչև } \frac{1}{5} \left(\frac{1}{2} \right) \text{կամ } 6^{\circ}\text{-ից } \text{մինչև } 11^{\circ},$$

Բացի թերվածքից, կտուրի արտաքին տեսքի բնորոշ դիմավոր հատկանիշներից մեկը շենքի պարագծի ձեռն եւ:
Այս կամ այն շենքի պարագիծը կարող է լինել կա-



նոնավոր կամ անկանոն ձեռ՝ ուղղանկյուն, քառակուսի, կանոնավոր բազմանկյուն, շրջան, տրապեց, քառանկյուն և անկանոն բազմանկյուն:

Այն կտուրը վոր ծածկում է մի շենք, վորի պարա-

գծի ձևը վերսկում հիշվածներից մեկն՝ կոչվում եւ պարզ կտուր:

Այն կտուրը, վոր ծածկում և վերսկում հիշված մէքանի ձևերի զուգադրությունից կաղմած պարագիծ ունեցող մի շենք, կոչվում եւ բարդ կտուր:

Բացի շենքի հատակագծի ձևից, կտուրները տարբերվում են իրարից թէ լանջերի քանակով և թէ վերջինների ձևով:

Նկ. 3-ում ցուցց են տրված մի շարք կտուրներ,—

1. միալանջ կտուրներ (1) և (2),

2. լերկանջ կտուրներ (3) և (4),

3. քառալանջ կամ գավակավոր կտուր (5),

4. մանսարդի կտուր (6),

5. բրդաձև կտուր (7),

6. կոնաձև կտուր (8),

7. զլանաձև կտուր (9)և

8. գլրեթաձև կտուր (10):

Թեպետ նկ. 3-ում ցուցց տրված շենքի հատակագծից կազմված եւ մի քանի ձևերի զուգադրությունից, ալսինքն ուղղանկյուններից, քառակուսիններից և շրջաններից, բայց և ալիսպես բոլոր ձևերի կտուրները,—զունվելով տարրեր բարձրությունների վրա, լուրաքանչյուրն ինքնուրույն կերպով, ծածկելով մի առանձին ձև ներկալացնում են ինքնուրույն պարզ կտուրներ:

Նկ. 1-ը ներկալացնում եւ մի կտուր և ծածկում և ալիսպիսի շենք, վորի հատակագիծը կազմված եւ մի քանի ձևերի (ուղղանկյունների, կիսաշրջանի և կիսաբազմանկյան) զուգադրությունից. ալդ կտուրը կաղմված եւ քառալանջ, լերկանջ, կոնաձև և բրդաձև կտուրների զուգադրությունից (վորոնց հիմնագծերը գտնվում են միևնույն բարձրության վրա) և կոչվում եւ բարդ կտուր:

Կառւըների պրոլեկցիաների կառուցումը լուրացնելու
համար հիշենք մի քանի կանոններ:

Գծագրական լերկրաչափությունից մեզ հարտնի լե
հետեւալլու—

1. Յեթե լերկու իրար հետ փոխհատվող հարթու-
թյուններից մեկը թեքված է պրոլեկցիաների հարթությա-
նը, խակ մրտան ուղղահարաց, ապա արդ հարթություն-
ների իրար հետ փոխհատման գծի պրոլեկցիան համընկ-
նում և ուղղահարաց հարթության հետքի հետ:

2. Յեթե լերկու նույնաչափ թեքված հարթություն-
ների հետքերի փոխահատումը պրոլեկցիաների հարթու-
թյան վրա մի վորեն անկյուն և կազմում, ապա արդ լեր-
կու հարթությունների փոխհատման գծի պրոլեկցիան ալդ
անկյունը բաժանում է լերկու հավասար մասի:

3. Յեթե լերկու իրար հետ փոխհատվող հարթու-
թյուններն ուղղահարաց են պրոլեկցիաների հարթությա-
նը, ապա արդ հարթությունների փոխհատման գծի պրո-
լեկցիան ներկարացնում մի կետ, վորն համընկնում և
նրանց հետքերով կազմված անկյան գագաթի հետ:

4. Յեթե լերկու փոխհատվող և նույնաչափ թեքված
հարթությունների հետքերը դուգահեռ են իրար՝ պրո-
լեկցիաների հարթության վրա, ապա արդ հարթություն-
ների փոխհատման գծի պրոլեկցիան ևս դուգահեռ և
հետքերին և վերջինների միջև գտնվող հեռավորությունը
բաժանում է լերկու հավասար մասի:

Կառւըները պրոլեկտելիս պետք է կիրառել հետեւալ
հիմնական կանոնները.—

1. Միենուլին կառուրի բոլոր լանջերը պետք ե ունե-
նան նույնաչափ թեքվածք:

2. Պետք է խուսափել շեղ հարթություններից, ալ-
ախնքն՝ շեղ լանջերից:



I. ՊԱՐՁ ԿՏՈՒՐՆԵՐ

1. ՀԱՏԱԿԱԳՄՈՒՄ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՊԱՐԱԳԻՄ ՈՒՆԵՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԿՏՈՒՐՆԵՐԸ

Ներքեսում ցուցց տրված բոլոր նկարներում, մասշտաբի սղության պատճառով և նկարների ոլարգության նպատակով, չեն գծված ջրատար ճոռերը և խողովակները, ծխանները, լուսանցուցները և այլն:

ՄԻԱԼԱՆ Զ ԿՏՈՒՐՆԵՐ

Միալանջ կտուրը (նկ. 4) ուղղանկյան ձևի պարագիծ ունեցող շենքեր և ծածկում:



Նկ. 4



Նա անձրեսի ջրին ընթացք եւ տալիս գեղի շենքի մի կողմը միայն Միալանջ կտուրով սովորաբար ծածկում են արնավայրի նեղ շենքեր, վորոնք չունեն միջակա լերկայնական պատեր կամ հենարաններ, կամ վորոնք լերկայնական պատերից մեկը կից եւ ավել-

լի բարձր շենքի կամ զետեղված եւ հարևան հողամասի սահմանի վրա, վորովհետեւ չի կարելի անձրեսի ջրի ընթացքն ուղղել կամ ձլունը կտուրից թափել հարևանի բակը:

Բացի ալդ միալանջ կտուրներով ծածկում են հաճախ նաև գործարանալին շենքեր, վերջին դեպքում իրար կըս- ված միալանջ կտուրների մի շարքը կազմում ե, ալսպես կոչված, սղոցածիվ կտուր, տես (նկ. 3):

ՅԵՐԿԱՆՁ ԿՏՈՒՐՆԵՐ

Յերկանջ կտուրը (նկ. 5) ծածկում է ուղղանկան ձեփ պարագիծ ունեցող շենքեր: Նա անձրեսի ջրին ընթացք և տալիս դեպի շենքի լերկու լերկալ- նական կողմերը: Յե- սանկուն պատերը, վոր սահմանափակում են լերկանջ կտուրը լայնական կողմերից, կոչվում են նակտոններ:



Նկ. 5

Յերկանջ կտուրի լանջերը հավասար են իրար:




Գործարանալին շենքեր ծածկելիս հաճախ գործ են, ածում այնպիսի լերկանջ կտուրներ, վորոնց լանջերը տարբերվում են իրարից վահան չափերով, ալլ և թեք- վածքներով (նկ. 3): Ալդպիսի կտուրները կոչվում են ըեղային կտուրներ կամ ըեղեր, նրանց լանջերից մեկը ծածկում են ապակով՝ ներսը լուսավորելու համար:

ՔԱՌԱՆՁ ԿՏՈՒՐՆԵՐ

Քառալանջ կտուրը (նկ. 6) ծածկում է ուղղանկան ձեփ պարագիծ ունեցող շենքեր: Նա ավելի հավասարա- չափ է բաժանում անձրեսի ջուրը, ընթացք տալով վեր-

Չենին դեպի շենքի բոլոր չորս կողմերը և ծառայումց
առանձնակի շենքերը ծածկելու համար:




Քառալանջ կտուրը լերկլանջ մի կտուր ե, վորի լալ-
նական ճակատները հատված են լեռանկյուն լանջերով,
ալդ լեռանկյուն լանջերը կոչվում են գավակներ, դրա
համար ել կտուրը հաճախ կոչվում ե գավակավոր կամ
վրանաձեվ: Գավակ-
ների թեքվածքը հա-
վասար ե գլխավոր
լանջերի թեքվածքին:
Քառալանջ կամ դա-
վակավոր կտուրները
լայն չափով ընդուն-
ված են մեծ և լայն
շենքեր ծածկելու հա-
մար, վորտեղ լերկլանջ



Նկ. 6

կտուրի դեպքում ստացվում են շատ մեծ ճակտոններ,
վորպիսի տեսքն անախորժ և փողոցից դիտողի համար:



Յեթե քառալանջ
կտուրի դավակները
սկիզբն են առնում
ճակտոնի կեսից և վոչ
կտուրի հիմքից (նկ.
7), ալդ դեպքում կը-
տուրը կոչվում ե կի-
սագավակավոր: Կի-
սագավակավոր կտուր-
ները գործ են ածվում
գլուղատնտեսական և ամառանոցային շենքերը ծածկելիս:



Նկ. 7

ՄԱՆՍԱՐԴԻ ԿՏՈՒԹՅՈՒՆԵՐ

Մանսարդի կտուրը (նկ. 8) միալանջ կամ լեռկլանջ կտուրների ձևափոխությունն եւ և վերջիններից տարբերություն եւ նրանով, վոր մանսարդի կտուրի դեպքում լանջերը բաժանվում են լերկու մասի, վորոնցից ներքեինը սեղ և թեքությամբ, իսկ վերևինը ավելի տափակ: Ման-



նկ. 8

սարդի կտուրները կարող են լինել միալանջ և լեռկլանջ, գավակներով և առանց գավակների: Մանսարդի կտուրը գործ եւ ածվում ձեղնահարկը բնակության համար ոգտագործելուն պատակով:

Մանսարդի կտուրի պրոֆիլը գծելու համար

կան մի քանի լեզանակներ. բերաւմ ենք ամենապարզը (նկ. 9):


Յերկլանջ կտուրի հիմնագծի կեսի վրա գծում ենք շրջանագծի մի քառորդը. վերջինը բաժանում ենք լերեք հավասար մասերի և բաժանման ($\frac{1}{4}$ և $\frac{1}{5}$) կետերը ($5-1$) և ($4-3$) լարերով միացնում ենք (1 և 3), կետերի հետ. լարերի փոխհատմամբ կազմված ($1-6-3$) զիծը տալիս ե կտուրի պրոֆիլը:

Յեթե մանսարդի կտուրը կառուցվում ե մի շենքի վրա, վորի բարձրությունը սահմանալին ե (թուլաբելի ամենամեծ բարձրությունն ե) փողոցի լայնության վերաբերմամբ, ասդա անհրաժեշտ ե, վոր (6) կետը դուրս չգա այն գծից, վորը շենքի ըիվի ծալլից 45° անկյամբ թեքված ե դեպի հորիզոնը:



Բ ԲԱԳԱԶԵՎ Կ ՏՈՒՐՆԵՐ

Յեթե շենքի հատակագիծը քառակուսու (նկ. 10) կամ կանոնավոր բազմանկյան (նկ. 11) ձև ունի, ապա կտուրը ներկալացնում երուրդ՝ կողերի համապատասխան քանակով:


Բրդաձև կտուրի լանջերը ներկալացնում են ինունկուններ, վորոնց գագաթները միանում են մի կետում, վոր կոչվում է իտու-



Նկ. 9



Նկ. 10



Նկ. 11

րի գագար: Բրդաձև կտուրով կարելի լի ծածկել նաև այնպիսի մի շենք, վորի հատակագիծն անկանոն բազմանկյան ձև ունի, այդ մասին կխոսենք ներքեւում:


ԿՈՆ ԱԶԵՎ Կ ՏՈՒՐՆԵՐ

Յեթե շենքի հատակագիծը շրջանի ձև ունի (նկ. 12), ապա կտուրը կոն ե ներկալացնում և կոչվում ե կոնաձև կտուր:


Ա Ա Յ Ր Ա Զ Ե Վ Հ Տ ՈՒ Ի Ր Ն Ե Բ

Յեթև բրդածի (նկ. 13) կամ կոնաձն կտուրի վերելքի բարձրությունը չափազանց տարբերվում է սովորականից, ապա կտուրը կոչվում է սալրաձն:

Սալրաձն կտուրները գործ են ածվում շենքը զարդարելու համար, կամ այն զեպքերում, լեռը ալղպիսիները լուրահատուկ են շենքի վոճին (ստիլին):





Նկ. 12



Նկ. 13

Բ Ա Զ Մ Ա Շ Ա Կ Տ Ո Ւ Հ Տ ՈՒ Ի Ր Ն Ե Բ


Յեթև քառակուսի հատակագիծ ունեցող մի շենք ծածկենք լերկու միենուուն թեքվածքի լերկլանջ կտուրներով, ապա վերջինների պիպերն իրար ուղղահայաց կլինեն և ալդ կտուրների փոխհատումը (նկ. 14) կկազմի բազմանակտոն կտուր, վորը բոլոր չորս կողմերից սահմանափակված կյինի լեռանկլուն պատերով, ալսինքն ճակտոններով։ Քառակուսու անկլունագծերը կկազմեն հոսարանների պրոլեկցիաները։




Նկ. 14

Բազմանակտոն կտուրով կարելի լի ծածկել նաև բազմանկուն հատակագիծ ունեցող շենքեր (նկ. 15):

Ինչպես տեսնում ենք, բազմանակտոն կտուրների պիտերի, հոսարանների և ճակտոնների քանակը հավասար և բազմանկրան կողմերի կամ անկունների քանակին:



Ցեթե բազմանակտոն կտուրի պիտերի փոխատման կետը քիչ թե շատ վերև բարձրացնենք, կտանանք բազմանակտոն և բազմանիստ բրդաձև կտուրներ (նկ. 16 և 17). վերջինների պիտեր թեքված կլինեն:



Նկ. 16



Նկ. 15





Նկ. 17

ՈՉԱԿԱՋԵՎ ԿՏՈՒՐՆԵՐ

Ցեթե շենքի հատակագիծն ողակի կամ վերջինի մեմասի ձև ունի (նկ. 18), ապա կտուրը կոչվում է ողակաձև կտուր: Ողակաձև կտուրի պիտը շրջանագիծն է կամ վերջինի մի մասը, իսկ լանջերից՝ արտաքինը հատած կոնի կողմային մակերեվութը կամ վերջինի մի մասն ե, իսկ ներքինը, ձագար կամ շրջված հատած կոնի կողմանակերեւութը կամ վերջինների մի մասն ե:

Ինչպես տեսնում ենք վերեվութ բերված նկարներից, բոլոր զեպքերում, լեթե շենքերի հատակագծերը կանոնավոր ձևեր ունեն,



Կ. 18

ապա ալդովիսի շենքերի պարզ կտուրները պրոլեկտելիս,
վոչ մի գժվարության չենք հանդիպում և նկատում ենք
ներելալը.—

1. միայնակ կտուրի պիպի պրոլեկցիան համընկնում է
շենքի լերկանական պատերից մեջի հետ.



2. լերկանակ կտուրի պիպի պրոլեկցիան կտուրի թռիչ-
քը բաժանում է լերկու հավասար մասի.

3. քառական կտուրի դեպքում հատակագծի անկյուն-
ների կիսորդները կազմում են կտուրի կողերի պրոլեկ-
ցիաները, իսկ վերջինների փոխատման կետերը պիպի
պրոլեկցիայի սկզբնական և վերջնական կետերն են ներ-
կալացնում.

4. բրդաձև կտուրի դեպքում հավասարասրուն լե-
ռանկյունների կողերի կողմերը կամ անկյունների կիսորդ-
ները կտուրի կողերի պրոլեկցիաներն են կազմում, իսկ
բազմանկան կենտրոնը կտուրի գագաթի պրոլեկցիան և
ներկալացնում.


5. կոնաձև կտուրի դեպքում շրջանի կենտրոնը կը-
տուրի դագաթի պրոլեկցիան և ներկալացնում:

ՀԱՏԱԿԱԳՈՒՄՈՒՄ ԱՆԿԱՆՈՆ ՊԱՐԱԳԻԾ ՈՒՆԵՑՈՂ ՇԵՆ-
ՔԵՐԻ ԿՏՈՒՐՆԵՐԸ




Նկ. 19

Շենքի հատակագիծը սեղան և (Նկ. 19): Վարովհետեւ
բուրոր լանջերի թեքվածքը նույնը
պիտի լինի, ուստի կիսում ենք
անկյունները և, կիսորդների փոխ-
հատման կետերը ուզիղ գծով
միացնելով ստանում ենք պիպի
պրոլեկցիան. կիսորդները ներ-
կալացնում են կտուրի կողերի
պրոլեկցիաներ: Պիպը հորիզո-
նական դիրք ունի:




Շենքի հատակագիծը քառանկյունի և (նկ. 20):
 Վորովինետն ալս գեղքում ևս բոլոր լանջերի թեքված-
 քը նույնը պիտի լինի, ուստի կիսում ենք անկլունները
 և վերջինների կիսորդների փոխհատման կետերը ուղիղ
 գծով միացնում իրար: Խնչպիս տեսնում ենք, պիտի
 պրոյեկցիան լերկալնական պատերից վոչ մեկին զուդահեռ-
 չե: բացի այդ, կտուրի ճակատից
 լերենում և, վոր պիտի հորիզոնա-
 կան չե, ալլ թեքված դիրք ունի:




Այստեղ շեշտենք այն, վոր,
 թեթև պիտին հորիզոնական դիրք
 տանք, կտուրի գլխավոր լանջերը
 տարրեր հատվածներում տարրեր
 թեքվածքներ կունենան, ուստի
 լանջերի հարթությունները կրա-
 տացվեն շեղ, վոր շատ կրարդա-

նկ. 20

ցնի թե ծաղեղների և թե նույնիսկ ծածքի կառուցումը-
 այդ պատճառով խնդիրի ալս լեզանակի լուծումն անթուլ-
 լատրելի լե, վորովինետն կտուրների պրոյեկտման գլխավոր
 կանոններից մեկն և խուսափել ենի հարդուրյուններից:
 Մասին:



Մենք կարող ենք վորոշ շա-
 փով մեղմացնել այն անախորժ
 տպագորություննը, վոր թողնում և
 թեքված պիտի փողոցից գիտողի
 վրա: Այդ նպատակով (նկ. 21),
 սկսած՝ պիտի ստորին կետից,
 կտուրը հատում ենք հորիզոնա-
 կան հարթությունով, և այդ հա-
 տումից ստացված լեռանկյունը
 ծածկում ենք ավելի տափակ բըր-






նկ. 21


գառձեւ կտուրով. վերջինը փողոցից համարլա չի լերեա, իսկ կտուրն ամբողջապես փողոցից հորիզոնական պիտ ունեցող կտուրի կնմանի:

Տերում ենք մի լեզանակ ևս վոր նույն նպատակով սատաշարկում և պրոֆ. Շիշկոն (նկ. 22):


Կտուրը հատում ենք նույն կերպ՝ հորիզոնական հարթությունով և սատանում. (1), (2) և (3) կետերը, ինչ (4) կետն ընդունում ենք վորպես կտուրի ամենաբարձր



Նկ. 22




Նկ. 23



կետ. այդ կետում միացնում ենք սատորին կետերից սկսվող պիտերը. Արդպիսի կտուրը փողոցից համաչափ կերեա:

Շենքի հատակագիծը անկանոն բազմանկյուն ե, վոր շատ չի տարբերվում կանոնավորից (նկ. 23):



Նկ. 24



Գտնում ենք բազմանկյան ծանրության կենտրոնը կամ վեր-

ջինը նշում ենք աշքաչափով և, ընդունելով ծանրության կենարունը վորպես բուրգի գագաթի պրոյեկցիան, ծածկում ենք շենքը բրդաձև կտուրով։ Պարզ ե վոր այս դեպքում կտուրի լանջերը տարբեր թեքվածքներ կունենան։

Այն դեպքում լեռը շենքի հատակագիծը մի այնպիսի անկանոն բազմանկյունն և ներկայացնում, վոր շատ և տարբերվում կանոնավորից (նկ. 24), միաք չունի ծածկել շենքը բրդաձև կտուրով, վորովհետեւ կտուրի լանջերից մի քանիսը կարող են շատ տափակ ստացվեր։ Ամելլի նպատակահարմար և արդարիսի հատակագիծը բաժանել լերկու մասի (նկ. 25), վորոնցից մեկը քառանկյունն է, իսկ մյուսն անկանոն բաղմանկյան մի մասը և ապա ծածկել այդ լերկու մեերի դուդաղը բությունից կազմած հատակագիծը բարդ կտուրով։

Վերջացնելով խոսքը պարզ կտուրների մասին, հիշենք բազմատեսակ գլանաձև և գմբեթաձև կտուրները, վորոնց պրոյեկցիաների կառուցումը վոչչով չի տարբեր-

վում համանուն կամարների պրոյեկցիաների կառուցումից. վերջիններին բավականաշափ տեղ և հատկացվում կամարների դասընթացներում։



Նկ. 25

II ԲԱՐԴ ԿՏՈՒՐՆԵՐ.

Մի կտուր վոր ծածկում ե մի քանի պարզ ձևերի դուգաղբութլունից կազմած պարագիծ ունեցող մի հատակադիմած, կռչվում ե բարդ կտուր:



Արդարիսի զուգադրութլունները կարող են լինել կազմած լերկու կամ ավելի կանոնավոր կամ անկանոն ձև ունեցող պարագծերից և կարող են լինել շատ բազմատեսակի:

Բարդ կտուրի պլրուեկտումը պետք ե սկսել ամենամեծ թոփչք ունեցող ձևից և ապա վերջինի կտուրին կցորդել հետեղնետե փոքր թոփչք ունեցող ձևերի կտուր-

ները, խուլ տալով միենուն ժամանակ փոս ընկնող լերկնիստ և հորիզոնական կող ունեցող անկրուններից, վորպեսզի վերջիններում անձրեկի ջուրը կանգ չառնի:


Ցենթրադրենք, վոր հարկավոր և ծածկել կտուրով մի շենք, վորի հատակագիծը կազմած ե լերկու տարբեր թոփչք ունեցող ուղղանկուններից (նկ. 26), վոր կցված են իրար կարճ կողմերով, ուղղանկունների լերկալնական կողմերի

մի դուգը իրար շարունակութլուն են կազմում, ալ սինքն դանվում են մի ուղիղ գծի վրա:




Նկ. 26


Ուղղանկյուններն ինքնուրուցն քառալանջ սպարզ կտուրներով ծածկելով, տեսնում ենք վոր նրանց միջև գոյանում ե փոս ընկնող լերկնիստ անկյուն՝ հորիզոնական կողով. ալգուեղ անձրեսի ջուրը արագ չի հոսի: Դրա առաջն առներու համար (նկ. 27), փոքր կտուրի պիտի շարունակում ենք մինչև վերջինի մեծ կտուրի մոտակա կողի հետ փոխհատվելը և ստանում ենք մի ընդհանուր լանջ, վոր պատկանում ե ուղղանկյունների միենուկն ուղիղ գծի վրա գտնվող կողմերին: Պիտի և կողի փոխհատման կետը միացնում ենք հատակագծի ներս ընկնող անկյան գագաթի հետ և ըստանում ենք հոսարանի պլոյեկցիան, վոր գորանում ե փոքր կրտուրի լանջի և մեծ կտուրի գավակի իրար հետ փոխհատումից: Սրանով հավաքառում ենք խնդրի լուծումը:



Նկ. 27



Նկ. 28



Նկ. 28-ը մի այնպիսի հատակագիծ է ներկալացնում, վոր կազմած ե լերեք ուղղանկյուններից. վերջինները կը ցված են իրար կարճ կողմերով, վորոնք լերկայնական կողմերի հետ բեկլալ դիմ են կազմում: Գծում ենք մեծ թրամական կողմերով, ուղղանկյան կտուրը կցելու համար կիսում ենք

ուղղանկյուններու ուղղանկյան քառալանջ կտուրը. վերջինին լերկը ուղղանկյան կտուրը կցելու համար կիսում ենք

հատակադիմի ներս ընկնող անկլունները և վերջինների կիսորդների փոխհատման կետն այն կետն ե ներկալացնուած, վորում լերկրորդ ուղղանկյան կտուրի պիպը կը նեավի մեծ ուղղանկյան կտուրի զավակը նույնը կը կնուած ենք լերբորդ ուղղանկյան վերաբերմամբ և արդարիսով ավարտում ենք խնդրի լուծումը:

Ագդպիսով տեսնուած ենք, վոր բարք կտուրների պըռլեկասումը մի շարք պարզ կտուրների կցորդումն ե ներկալացնուած:

Վերեսուաթերված որինակներից տեսնուած ենք հետեւալը՝

1. դուրս ընկած անկլունների կիսորդները կազմուած են ըստ հատակադիմի լերկու կից լանջերի միջև գտնվող հոսարանների պըռլեկցիանները.

2. ներս ընկած անկլունների կիսորդները կազմուած են ըստ հատակադիմի լերկու կից լանջերի միջև գտնվող հոսարանների պըռլեկցիանները.

3. դուրս ընկած անկլունների կիսորդների (կամ կողերի պըռլեկցիանների) փոխհատման կետերը և ներս ընկած անկլունների կիսորդների (կամ հոսարանների պըռլեկցիանների) փոխհատման կետերը ներկալացնուած են պիպի սկիզբը կամ վերջավորությունը.



4. միենանուին ուղղանկյան լերկու համանուն կողմերից ակիզը առնող լանջերի փոխհատումից դորացած պիպի պըռլեկցիան զուգահեռ և արդ կողմերին և վերջինների միջև լերգած հեռավորությունը բաժանուած ե լերկու հավասար մասերի:

ԿՏՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂԱՆԿՑՈՒՆ ԿՑՈՐԴՈՒՄԸ

Նկ. 29 ներկալացնուած ե մի հատակադիմ, վորի պարագիծը կազմած ե լերկու հավասար թոփչքների ուղղանկլուններից, վոր կցված են իրար անկլունարդի ձևով:



Ուղղանկունները ծածկելով քառալանջ կտուրներով, տեսնում ենք, վոր վերջինների միջև գորանում ե փոս ընկած լերկնիստ անկլուն՝ հորիզոնական կողավ՝ Վերջինի առաջն առնելու համար մի կտուրի պիտի ընդունակում ենք մինչև մյուս կտուրի պիտի հետ փոխհատվելը. փոխհատման կետը միացնում ենք ներմուծվող անկլան դադաթի հետ և ստանում հոսարանի պրոյեկցիան։ Խնչալես տեսնում ենք, լերկու կտուրներ՝ պիտի ընդունակում են միևնուշ՝ բարձրության վրա, վորովհետ։ կտուրների թոփչքները հավասար են իրար։

Նկ. 31 ներկալացնում ե նույն ձևի կտուր, վոր ծածկում ե լերկու տարրեր թոփչք ունեցող ուղղանկլուններ։ Խնչալես տեսնում ենք, կտուրի պրոյեկցիաների կառուցման սկզբունքը նույնն ե. շարու-



Նկ. 29

նակում ենք փոքր կտուրի պիտի մինչև մեծ կտուրի մոտակա կողի հետ փոխհատվելը, գծում ենք ներս ընկած անկլան կիսորդը և ստանում հոսարանի պրոյեկցիան։




Նկ. 30

Այն գեպքում (Նկ. 32), լը բուղղանկլուններին կցված են լայնական կողմերից ուրիշ նույն թոփչք ունեցող ձեեր ևս, — կիսաշրջան, կիսարազմանկլուն, — կտուրի պրոյեկցիանի կառուցումը մնում ե նույնը այն տարբերությամբ միայն, վոր կտուրին կցվում են մի կող-

մից կոնաձև կտուրի կեսը, իսկ մլում կողմից բրդաձև կը-
առարի կեսը. կոնի և բուրդի գագաթները ներկայացնում են
պիպերի վերջավորությունների կետերի պըռիեկցիաները:
Ինչպես անուած ենք վերևում բերված որինակներից,
յերբ ծածկելի ուղղանկյունների
թափչքները տարրեր են, պիպերը
տարրեր բարձրությունների վրա
լին գտնվում. վերջին հանգաման-
քը վորոշ չափով բարդություն և
տակ բարում ծպեզների կառուց-
ման գործում, առանձնապես ավե-
լի բարդ կառուրների դեպքում:

Այժմ, անմենք կարելի է
արդյոք նույն կառուը կառուցել
այնպես, վոր, լերկու կցորդվող
կառուրների պիպերը լինեն միև-
նուակն բարձրության վրա և չընդ-



Նկ. 31.

հատվեն կողերով. Այս, կարելի է, դժու
համար հարկավոր և դիմել հետեւալ
լերկու լեղանակներից մեկին:

Առաջին յեղանակ.

Ենդվում ենք կտուրների կառուց-
ման հիմնական կանոնից, այսինքն՝
միմինուկն կտուրի բոլոր լանջերին
միենուկն թեքվածք տալուց:




Կիբառելով այս լեղանակը (Նկ. 33),
անմուռ ենք, վոր, լեթե մենք լելնենք
փոքր թափչքի լանջերին պատշաճ թեք-
վածքից, ապա ստիպված կլինենք մեծ





Նկ. 32

կտուրի լանջերին տալ այնչափ չնչին թեքվածք (ան-

կողքի ճակատը), վոր դուցե բոլորովին անթուլատրելի լինի կտուրի ծածքի տվյալ նորութի համար. իսկ լեզնելով մեծ թռիչքի լանջերին պատշաճ թեքվածքից (նկ. 34), փոքր կտուրի լանջերը այսպիս սեպաձև են ստացվում, անկարելի լեռնույն իսկ ման զալ կտուրի վրա՝ վերջինս կարկատելու կամ ներկելու դիսլքում.



նկ. 33



նկ. 34

Արեկարդ շեղանակ

Կտուրի բոլոր լանջերին միենույն թեքվածքն հնք տալիս (նկ. 35), փոքր կտուրը բարձրացնում ենք, իրեն զուգահեռ թողնելով, մինչև պիտերի շարունակությունների իրար հետ փոխառովելը (տես նկ. 31 և 35), և ստանում ենք պիտերը միենույն բարձրության վրա. բայց այդ իրազործելու համար մենք ստիպված ենք բարձրացնել ուղղանկյունների պատերի մի մասն ևս, վոր ավելորդ ծախս ե պահանջում:

Այս լեղանակը թուլլատրելի է առանձնահատում շենքերում, վորտեղ ալդ պահանջվում ե կոնստրուկտիվ և այլ տեսակետներից, — և ամառանոցալին շենքերում ու կոտեշներում, այն ել զուտ գեղարվեստական նպատակով, ձանավանդ հատակագծերի քմահաճ կոժպոզիցիաների դեպքերում, ե վոչ սովորական շենքերում։




Ալդ պատճառով բարդ կտուրներ պրոյեկտելիս և մենք պետք ե կիրառենք կտուրների կառուցման հիմնական կանոնը, միևնույն կառուրի բոլոր լանջերին տալով միևնույն թեքվածքը՝ ալդ կանոնից շեղվելով շատ սակավ դեպքերում։

Արագես որինակ՝ նկ. 36-ը մի շենքի հատակագիծ ե, վորի ներս ընկած անկան կից և մի դուրս լեռող քառակումի։

Կտուրը սովորական լեղանակով կառուցելու փոխարեն (նկ. 36), ծալեղների կառուցումը հեշտացնելու ովատակով, մենք կարող ենք ալդ քառակումին ծածկել ավելի տափակ լանջերով (նկ. 37)։




Նույն լեղանակը հաճախ կիրառվում է այնպիսի շենքերում, վորոնց կից են պատշգամբներ (նկ. 38), ինչպես տեսնում ենք, պատշգամբ ծածկող լանջը կառուրի գլխավոր լանջերից ավելի տափակ եւ։

Նկ. նկ. 39, 40, 41 և 42 ներկալացնում են մի շաբք կտուրներ, վորոնք ծածկում են տավրաձև հատակագիծ ունեցող շենքեր՝ հատակագիծը կազմող ձևերի միևնույն (նկ. 39), և տարբեր (նկ. 40, 41 և 42) թռիչքներով։




Նկ. 35

Նկ. նկ. 43, 44 և 45 ներկալացնում են մի շաբթ
կտուրներ, վորոնք ծածկում են յեղանաձև հատակագիծ




Նկ. 36




Նկ. 37

ունեցող շենքեր՝ հատակագիծը կազմող ձևերի միևնույն
(նկ. 43) և տարրեր (նկ. 44 և 45) թռիչքներով:



Նկ. նկ. 46, 47 և 48 ներկալաց-
նում են մի շաբթ կտուրներ, վոր ծած-
կում են յերկտավրաձև հատակագիծ
ունեցող շենքեր՝ հատակագիծը կազ-
մող ձևերի միևնույն (նկ. 46) և տար-
րեր (նկ. 47 և 48) թռիչքներով:




Ինչպես տեսնում ենք վերևում
բերված նկարներից, կտուրների կա-
ռուցման սկզբունքը նույնն է, ինչ
վոր առաջ հիշեցինք:



Նկ. 38

Ներքիում բերում ենք կտուքների ուղղանկյունները՝ կցորդման մի քանի բնորոշ գեղքեր ետ:




1. Ցերկու տարիեր բռիչ ունեցող ուղղանկյուններն



Նկ. 39

Նկ. 40

իւար տօսափում են յերկար կողմերով. տօսափման զիծը փոքր բռիչից կարն է (նկ. 49):






Նկ. 41


Նկ. 42

Ուղղանկյունները ծածկելով ինքնուրույն կտուքներով, ահանում ենք վոր, շոշափման գծի վրա դոլանում ե լերկնիստ

փոս ընկնող անկյուն՝ հորիզոնական կողով. վերջինից
խուսափելու համար (նկ. 50), շոշափման դիմը՝ բաժա-
նում ենք լերկու հավասար մասի, բաժանման կետից քա-






Նկ. 43




Նկ. 44

շում ենք ուղղանկյունների կարճ կողմերին դռւղանեռ մի
դիմ, այսուհետև կիսում ենք ներս ընկած անկյունները.






Նկ. 45




Նկ. 46

վերջինների կիսորդները ներկալացնում են հոսարան-
ների պրոյեկցիաները, իսկ քաշած գծի մի մասը լերկու-




լոնջերի գործառութից գոլացող պիպի պըռկելցիան ե-
ալդ լանջերը կտուրների զավակների շարունակություն-




Ալ. 47



Ալ. 48



Ալ. 49





Ալ. 50

ներն են կազմում:

Նկ. Ալ. 51, 52, 53 և 54 բերված են նույն խնդրի

լուծուամբ, լերը ուղղանկյունների շոշափուան գիծը հավասար է փոքր ուղղանկյան թռիչքին (նկ. 51), լերը նա գերազանցում է վերջինը, բայց մեծ թռիչքից կարճ է (նկ. 52), լերը ուղղանկյունների շոշափուան գիծը հավասար է մեծ թռիչքին (նկ. 53), և, վերջապես, լերը նա զերազանցում է մեծ թռիչքը (նկ. 54): Խնչպես տեսնում ենք, տարրեր դեպքերում լանջերի պլութեցիաները տարրեր ձևեր են ընդունում. բայց ալդ, ըոլոր դեպքերում ստանում ենք լերը ըորդ պիպ և, վոր գորանում է կտուրների գավակների շարունակությունների փոխհատումից:

2 Ցերկու ուղղանկյուններ փոխհատում են իրաց. փոխհատման մակերեսը հառակուսի յե ներկայացնում (նկ. 55): Ուղղանկյունները ծածկում ենք ինքնուրուցն կտուրներով և, ըստ զծագրական լերկրաչափության կանոնների, զծում ենք նրանց փոխհատման





պլութեցիաները (ներ-

նկ. 51

կա դեպքում լերկու բուրգերի փոխհատման պլութեցիաները) և խնդիրը լուծված եւ:



3. Նույն ուղղանկյունների փոխհատման մակերեսն ուղղանկյունի ներկայացնում (նկ. 56):

Ուղղանկյունները ծածկելով ինքնուրուցն կտուրներով և, ըստ զծագրական լերկրաչափության կանոնների, զծնելով ալդ լերկու կտուրների փոխհատման պլութեցիաները, ստանում




նկ. 52


ենք վստ ընկնող լերկնիստ անկլուն՝ հորիզոնական կողով-
վերջինից խուսափելու համար (նկ. 57) ալդ անկլան
կողը բաժանում ենք լերկու հավասար մասի և բաժան-
ման կետից քաշում նրան ուղղահարաց մի գիծ. ալդ գծի
մի մասը ներկալացնում և լերկու փոքր լանջերի փոխ-
հասաւմից զուացած պիպի պրոյեկցիան, իսկ ալդ փոքր
լանջերը կազմում են կտուքների գլխավոր լանջերի շա-



Նկ. 53



Նկ. 54







Նկ. 55


բուհակությանները. Ներս ընկած անկլունների կիսորդ-
ները ներկալացնում են հոսարանների պրոյեկցիանները:

Նկ. 58 և 59 ներկալացնում են նույն խնդրի լու-
ծումը՝ փոխհատման մակերեսների ալլ դիրքի և տարբեր
չափերի գեպքում:


Ինչպես տեսնում ենք, ալս դեպքերում ստացվող պի-
պերը գորանում են կտուքների դավակների շարունա-
կությունների փոխհատումից:






Ab. 56




Ab. 57



Ab. 58





Ab. 59





Ab. 60

Նկ. սկ. 60, 61 և 62
ներկալացնում են ավելի
բարդ կառուքների պլոյեկ-
ցիաներ:

Վերջինների կառուցու-
մը հիմնված է նույն սկզբ-
առնքների վրա, վոր հիշել
ենք վերևում:



Նկ. 61




Նկ. 62


ԿՏՈՒՐՆԵՐԻ ՍՈՒՐԱՆԿՑՈՒՆ ՅԵՎ ԲՈՒԹԱՆԿՑՈՒՆ
ԿՑՈՐԴՈՒՄԸ

1. Շենքի հատակագիծը բաղկացած է լերկու միևնուրկն բարձրությունն ունեցող սեղաններից. վերջիններն իրար կցելով կազմում են սուր անկյունն (նկ. 63).

Մածկելով սեղանները ինքնուրույն կտուրներավ, տեսնում ենք, վոր վերջինների միջև գորանում և փոս ընկած



լերկնիստ անկյուն՝ հորիզոնական կողով. վերջինից խուսափելու համար մի կտուրի պիտի շարունակում ենք մինչև մլուս կտուրի պիտի հետ փոխառավելու. փոխհատման կետը միացնում ենք ներս ընկած անկյան դադարի հետ և ստանում հոսարանի պրոյեկցիան:



Նկ. 63

2. Շենքի հատակագիծը բաղկացած է լերկու աարեքներ ունեցող սեղաններից (նկ. 64). վերջիններն իրար կցելով կազմում են սուր անկյունն:


Սեղանները ծածկում ենք ինքնուրույն կտուրներավ, փոս ընկած անկյունից խուսափելու համար փոքր կտուրի պիտի շարունակում ենք մինչև մեծ կտուրի մոտակա կողի հետ փոխհատվելու. փոխհատման կետը միացնում ենք ներս ընկած անկյան դագաթին և ստանում հոսարանի պրոյեկցիան:

3. Շենքի հատակագիծը բաղկացած է լերկու միևնուրկն բարձրությունն ունեցող սեղաններից: Վերջիններն իրար կցելով կազմում են բութ անկյունն (նկ. 65):

Սեղանները ծածկում ենք ինքնուրույն կտուրներավ-


փոս ընկած անկլունից խուսափելու համար կտուրների պիպերը շարունակում ենք մինչև իրար հետ փոխհատվելը այժմ արդեն փոս ընկնող անկլան կողը ներկալացնում և կտուրի դիսավոր լանջերի փոխհատումից դուացած կողի ու հոսարանի պրոյեկցիաները:

4. Շենքի հատակադիմքը բաղկացած եւ լեռկու տարրեր բարձրություններ ունեցող սեղաններից. վերջիններն իրար կցելով կազմում են բութ անկլուն (նկ. 66):



Սեղանները ծածկում ենք ինքնուրուցին կը տուրներով. փոս ընկնող անկլունից խուսափելու համար փոքր կտուրի

Նկ. 64




պիպը շարունակում ենք մինչև ոեծ կտուրի կողի հետ փոխհատվելը, փոխհատման կետը միացնում ենք ներս ընկած անկլան գագաթին և ստանում հոսարանի պրոյեկցիան:



Վերեսում բերված որինակներից տեսնում ենք, վոր կտուրների սուրանկյուն և բութանկյուն կցորդման դեպքերում ևս հատակագծի դուրս ընկած սուր և բութ անկլունների կիսորդները ներկալացնում են կտուրի կողերի պրոյեկցիաները, իսկ ներս ընկած սուր և բութ անկլունների կիսորդները ներկալացնում են կտուրի հոսարանների պրոյեկցիաները:

5. Շենքի հատակագիծը ներկալացնում և ուղղանկյուն, վորին կցված են տարրեր անկլունների տակ և լուղղանկյուններ (նկ. 67):


Մեծ ուղղանկյունը ծածկում է հնք քառալանջ կտուրով. 1 կտուրը վերջինին կցորդելու համար կիսում է հնք բութանկյունները և գծելով կիսորդները, տեսնում ենք, վոր վերջիններից մեկը (1-2) փոխհատվում է 1 կտուրի պիտի հետ (2) կետում. վերջին կետն այն կետն է ներւուացնում, վորտեղ պիտի կմեխվի քառալանջ կտուրի դավակը. մրուս բութանկյան կիսորդը (3-4), նախ քան պիտի հետ փոխհատվելը, և կետում կփոխհատվի մեծ կտուրի կողի հետ, վոր կազմում են մեծ կտուրի դավակը և դիմավոր լանջերից մեկը. միացնելով 2 և 4 կետերը մենք բացի լերկու (1-2 և 3-4) հոսարաններից ստանում ենք մի լերբորդ հօսարան և (2-4). Բեկալ դիմը (1-2-4-3) ներկաւացնում է այդ լերկու կտուրների կցորդման պրոյեկցիան.



Նկ. 65




Նկարից տեսնում ենք, վոր փոքր կտուրի լանջերից մեկը փոխհատվում է մեծ կտուրի դավակի հետ միայն, իսկ մրուսը փոխհատվում է մասամբ դիմավոր լանջի



Նկ. 66

հետ և մասամբ դավակի հետ:

Նույն լեզանակով լի կտուրը կցորդելիս, տեսնում ենք, վոր անկյան չափագանց բութ լինելու պատճառով, կրտտուրի հոսարաններից մեկի պրոյեկցիան համարլա թե զուգահեռ և պիովերին, հետեւապես արդ հոսարանի վրա համարլա թե հորիզոնական կող ունեցող լերկնիստ փոս ընկած անկյուն և զուանում, վորը ցանկալի չեւ վերջինից





Նկ. 67

խուսափելու համար կարելի լի կիրառել մի քանի լեզանակիներ. Նեքնում բերում ենք վերջիններից ամենահեշտը (նկ. 68). Փոքր կտուրի լանջերին տալիս ենք ավելի փոքր և ալիքափ թեքվածք, վոր նրա պիտն իջնի ցած և փոխհատվի մեծ կտուրի կողի հետ (կետ 2). արդ կետը միացնելով անկյունների գագաթների հետ ստանում ենք հոսարանները. արդպիսով (1-2-3) բեկլալ դիմը կներկայացնի արդ կտուրների կցորդման պրոյեկցիաները:


Այսաեղ շեշտենք, վոր չափագանց սուր կամ բութ անկյունների գեպքերում, վերջինների կիսելը և նրանց կիսորդների գծելը վորոշ չափով դժվարանում է և կարող

Ե գրաֆիկ սխալներ առաջ բերել, ուստի ներքեսում բերում ենք այդպիսի գեղագերում կտուրների կցորդման ավելի հեշտ լեզանակը (նկ. 69):

Անկյունները կիսելու և նրանց կիսորդները գծելու փոխարեն, մեծ կտուրի լանջի պրոյեկցիալի վրա քառում ենք մի գիծ, վոր դուգահեռ և մեծ ուղղանկյան կողմին և գտնվում ե վերջինից փոքր ուղղանկյան թըռիչքի կեսին հավասար հեռավորության վրա. փոքր կտուրի պիտը շարունակում ենք մինչև արդ գուգահեռ գծի հետ փոխհատվելը. փոխհատման կետը միացնում ենք ներս ընկած անկյունների հետ և ստանում հոսարանների պրոյեկցիաները կամ, վոր միևնույնն ե, անկյունների կիսորդները:



նկ. 69




նկ. 69


ՈՒՂՂԱԳԻՇ ՅԵՎ ԿՈՐԱԳԻՇ ԶԵՎԵՐԻՑ ԲԱՂԿԱՑԱՇ
ՀԱՏԱԿԱԳԻՇ ՈՒՆԵՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԿԾՈՒՐՆԵՐ.

1. Նկ. 70-ը ներկալացնում է անկլունարդի ձև ունեցող մի հատակագիծ, վորի պարագծի ներմուծվող մասը շրջանագծի մի քառորդն եւ:

Այդ հատակագիծը ծածկելու համար, սկսած կլորացման կետերից, նշում ենք մի շարք՝ կետեր, վոր կիսում են շառավիղալին թը-ովչքները. ալդ կետերը միացնելով մենք ստանում ենք կոր գծեր, վոր ներկալացնում են պիտերի պըուեկցիաներ:



Ինչպես տեսնում ենք կտուրի ճակատից, պիտի մասերը թեքված են մեջտեղից զեղլի աջ և ձախուկոր գծից սկսվող լանջը ձագարի մի մասը կամ շրջված հատած կոնի



Նկ. 70


մակերեսուկթի մի մասն՝ ներկալացնում:

Յեթե վորեն պատճառով ցանկալի լի, վոր փողոցից պիտի թեքվածքը աննկատելի լինի (Նկ. 71), այդ գեղքում կտուրը հատում ենք հորիզոնական հարթությունով, վոր անցնում ե պիտի ստորին կետով, և ալդ հատումից ստացված լեռանկյունը (վերջինի հիմքը շրջանագծի մի քառորդն ե) ծածկում ենք տափակ բրդաձեկտուրով: Այս գեղքում ամբողջ կտուրը փողոցից հորիզոնական պիտի ունեցող կտուրի կնմանի:

Այն դեպքում, թերը հատագիծը պարունակում է իր մեջ միջակա պատեր կամ հենաբաններ, մենք հնարավորությունն ունենք պիտին տալ հորիզոնական դիրք, որինակ.

ա) միջակա հեներանները դասավորված են շրջանագծի ուղղությամբ (նկ. 72, տես կիտաշար զիծը):

Հատակագծի մի մասը ծածկում ենք ողակաձև կառուրով, իսկ դուրս ընկած անկունը լերկու ավելի տափակ լանջերով, լանջերի վոխհատաման պրոյեկցիաները գտնում ենք՝ կիրառելով





Նկ. 71


գծագրական լերկրաչափության կանոնները:

բ) միջակա հեներանները դասավորված են ներս ընկած անկունը կազմող ուղղագիծ պատերի շարունակությունների ուղղությամբ (նկ. 73, տես կիտաշար զծերը):

Հատակագծի ուղղանկյունները ձևերը ծածկում ենք սովորական կտորով, իսկ հատակագծի




Նկ. 72



Ակ. 73

գավորման գեղքերում:

2. Շենքի հատակադիմքը շրջանի և ուղղանկյունների կցորդումն և ներկալացնում (Ակ. 78). Ուղղանկյունների կողմերի մի դուզը շրջանը, իսկ մյուս դուզը հատում և շրջանը Շրջանը ծածկում ենք կոնուձեկությունների կտուրով. մյուս կտուրները վերջինին կցորդելու




Ակ. 74

համար կիրառում ենք զծագրական լեռկրաչափության կամունները. Կտուրների կցորդման պրոյեկցիաներից տեսնում ենք, վոր ներկա գեղքում կոնի մակերեսութը կազմում և լեռկու կտուրների ճակատային լանջերի շարունակությունը:


3. Շենքի հատակագիծը բաղկացած է նույն ձևերի կը-ցորդումից. Աւդպանկունների կողմերը հատում են շրջանագիծը (նկ. 79),

Նույնպես ծածկելով և կոռուրները կցորդելով ըստ գըծագրական լերկը բաշափության կանոնների, տեսնում





Նկ. 75

ենք, վոր այս դեպքում արդեն չորս հոսարան ենք ստանում, վորովհետև ուղղանկյունների կողմերը շրջանագծի հատողները են հանդիսանում:





Նկ. 76

Վերջին լերկուորինակներում կըտուրի լանջերի թեքվածքը միևնույնն եր. ըստց հաճախ պատահում ե, վոր կոնաձև կըտուրին ավելի մեծ թեքվածք են տալիս. այդ անում են կամ զուտ գեղարվեստական տեսակետից, վորովհետև կոնն այս դեպքում



Ակ. 77





Ակ. 75

կտաւքի վրա իշխող մասն և
հանդիսանում, կամ կառուց-
վածքալին տեսակնետից՝ ծը-
պեղների հորիզոնական հը-
րումը թուլացնելու համար

Այժմ տեսնենք ինչ տեսակ
ձեւ կընդունեն նույն կտաւք-
ների կցորդման պլրուելցիա-
ներն այն գեպքում, իերը
պկոնի թեքվածքը կցվող կը-
տուքների թեքվածքից մեծ եւ:

ա) Ուղղանկյունների կող-
մերի մի զուրդը շոշափում է
շրջանը, միտք զուրդը հա-
տում է շրջանը (նկ. 80):

Կտաւքները կցորդելով դարձլաւ ըստ գծագրական
իերկրաչափության կանոնների, տեսնում ենք, վոր այս





Ակ. 79



դեպքում չորս հոսարան ենք ստանում, բացի արդ՝ հոսարանների պլոյեկցիաները ավելի տափակ կոր գծեր են ներկայացնում:

բ) Ուղղանկյունների կողմերի լերկու դուրս ել հատում ե շրջանը (նկ. 81):

կտուրները կցորդելով նույն ձևով, տեսնում ենք, վայս դեպքում ևս չորս հոսարան ենք ստանում, բացի արդ՝



նկ. 80




նկ. 81

այս դեպքում ևս հոսարանների պլոյեկցիաներն ավելի տափակ կոր գծեր են ներկայացնում:

Ներքեւում բերում ենք կոնաձև և լերկանջ կտուրների իրար հետ փոխատման գծերի պլոյեկցիաների կտուցման ամենահեշտ լեղանակները՝ կոնաձև և լերկանջ կտուրների միենալուն և տարրեր թեքվածքների դեպքերում:


ա) Կոնաձև և լերկանջ կտուրների թեքվածքը միենալունն ե (նկ. 82):

Ե՞նդունելով կոռ-
նածե կտուրի գա-
ղաթի պրոլեկցիան
վորպես կենտրոն,
զծում ենք մի շաբք
համակենտրոն և ի-
րարից միենուին հե-
ռավորության վրա
զտնվող շրջանագ-
ծեր (1, 2, 3, 4).
Եթերկանց կտուրնե-
րի լանջերի պրո-
յեկցիաների վրա
և քաշում ենք իրա-



Ալ. 82

ըից նույն հեռավորության վրա զտնվող մի շաբք դու-
զանես զծեր. Համանուն զծերի և շրջանագծերի փոխ-
հառման կետերը հանդիսանում են հոսարանների պլութեկ-




Ալ. 83

ցիաներին պատկանող կետերը։ Ալդ կետերը միացնելով սահուն կոր գծով՝ ստանում ենք հոսարանների պրոյեկցիաները։

բ) Կոնաձև և լեռկլանջ կտուրների թեքվածքները տարբեր են (Նկ. 83)։

Կոնաձև կտուրի գագաթի պրոյեկցիան ընդունելով վորպես կենտրոն, գծում ենք մի շարք համակենտրոն



Նկ. 84


շրջանագծեր, վոր գտնվում են իրարից կոնի թեքման անկյան կոտանդենսին համեմատական հեռավորության վրա։ Լեռկլանջ կտուրների լանջերի պրոյեկցիաների վրա ևս գծում ենք մի շարք գուգահեռ գծեր, վոր գտնվում են իրարից լեռկլանջ կտուրների թեքման անկյան կոտանդենսներին համեմատական հեռավորության վրա։ Համանուն գծերի և շրջանագծերի փոխհատման կետերը հոսարանների պրոյեկցիաներին պատկանող կետեր են։ Ալդ կետերը միացնելով սահուն կոր գծով՝ ստանում ենք հոսարանների պրոյեկցիաները։

Նկ. 84-ը ներկալացնում և մի բարդ կտուր, վոր ծածկ կում և ուղղագիծ և կորագիծ ձևերից կազմած հատակագիծ ունեցող մի շենք:

Խնչպես տեսնում ենք նկարից, ալդ կտուրը բաղկացած և քառալանջ, լերկանջ, բրդածե, կոնածե և ողակածե կտուրների իրար հետ փոխատումից:


ՏԱՐԲԵՐ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԿՑՈՒՐՆԵՐԻ ԿՑՈՐԴՈՒՄԸ

Վերեսում բերված բոլոր որինակներն այնպիսի կը-առւըների կցորդումներ են, վորոնց հիմնագծերը գտնվում են միևնույն բարձրության վրա, արսինքն՝ ծածկում են այնպիսի շենքեր, վորոնց բոլոր մասերը միևնույն բարձրությունն ունեն:



Այն դեպքում, թերբ շենքի լեռկու իրար կցվող մասերի բարձրությունների տարրերությունն այնքան ե մեծ, վոր գերազանցում ե ավելի ցածր մասի կտուրի վերելքը, ապա այդ դեպքում արդ լեռկու կտուրներն իրար հետ շեն փոխհատվում, և վերջիններից լուրաքանչյուրը պարզ կտուր ե ներկայացնում:

Նկ. 3-ում բերված բալոր կտուրները, որինակ, պարզ կտուրներ են, թեպես ամբողջ շենքը բաղկացած ե մի քանի իրար կցվող մասերից:





Նկ. 86

Այն դեպքում, թերբ շենքի լեռկու իրար կցվող մասերի բարձրությունների տարրերությունն ավելի ցածր մասի կտուրի վերելքը չի գերազանցում, այդ դեպքում արդ լեռկու կտուրները մասամբ փոխհատվում են իրար հետ:



Արդպիսի կտուրներ պրոլեկտելիս, բացի մինչեւ այժմ

Հիշված կանոններից, պետք է իիրառել և գծաղբական լերկրաչափութլան կանոնները:



Նկ. 87

Նկ. 85-ում բներված կառւրը ծածկում և լերկու տարրեր բարձրութլուններ ունեցող մասերից բաղկացած մի շենք՝ շենքի մեծ մասն ավելի բարձր եւ:




Նկ. 85

Խնչպես տեսնում ենք կողքի ճակատից, ցածր մասի

կտուրի լանջերը, նախ քան մեծ կտուրի հետ փոխառավելը, կցվում են մասամբ շենքի բարձր մասի պատերին:

Արդպիսի կտուրների կցորդման պլրութեկցիաներ կառուցելիս պետք է դժել կտուրի ճակատներն ևս: Այս որինակում բերված են բոլոր ճակատները, թեպետ ներկա դեպքում բավական են լերկուալը:



Նկ. 89

Նկ. 86 ներկալացնում և նույն շենքի կտուրն այն դեպքում, լերը շենքի փոքր մասն ավելի բարձր է: Խնչպես տեսնում ենք (85 և 86) նկարներից, կտուրների պլրութեկցիաները բավականաշափ տարրերվում են իրարից:

Նկ. (87 և 88) ներկալացնում են միևնույն շենքի կտուրներ՝ շենքի մասերի միևնույն և տարրեր բարձրությունների դեպքերում:

Նկ. 89 բերված է միշտ ավելի բարդ որինակ. արտեղ արդեն կտուրի պլրութեկցիաները կառուցելու համար պետք է դժել կտուրի ճակատները՝ լերեք կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	3
Ծերկու խոսք	4
Ընդհանուր տեղեկություններ	5
 I ՊԱՐԶ ԿՏԱՒԻՄՆԵՐ	 10
Հատագագծում կանքնավոր պարագիծ ունեցող շենքերի կտուրներ (10), Ցերկանջ կտուրներ (11), Թառալանջ կտուրներ (12), Մանսարակի կտուրներ (13), Բրդաձև կտուրներ (14), Կոնաձև կտուրներ (15), Սայրաձեվ կտուրներ (15), Բազմաճակառն կըտուրներ (15), Աղակաձև կտուրներ (16), Հատագագծուա անկանոն պարագիծ ունեցող շենքերի կտուրներ (17),	
 II ԲԱՐՁՐ ԿՏԱՒԻՄՆԵՐ	 21
Կտուրների ուղղանկյուն կցորդումը (23), Կտուրների սուր անկյուն և բութանկյուն կցորդումը (36), Աւղագիծ և կորագիծ ձեերից բաղկացած հատակագիծ ունեցող շենքերի կտուրներ (41), Տարբեր բարձրությունների վրա գտնվող կտուրների կցորդումը (49),	



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Օրական



FL0002043

ЦЕНА

ԳԻՆԸ 2 ՊԵՐ.

ՕՏԿ.

024384



Օ. ԽԻԶԱՆՅԱ
ПРОЕКТИРОВАНИЕ
СКАТНЫХ КРЫШ

Гиз ССР Армении, Эривань, 1936 г.